ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Աշոտ Ղարագյոզյան ՍՊԸ-ն ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2023/5 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
16	կիսաճտքավոր կոշիկներ	կիսաճտքավոր կոշիկներ	կիսաճտքավոր կոշիկներ	Աշոտ Ղարագյոզյան ՍՊԸ	Բաղկացած է կոշկերեսի քթամասից, կրնկամասից՝ ամբողջական բարձրությամբ հետնամասի գոտիով, ճտքերից, լեզվակից, փափուկ եզրակից, հիմնական ներդիրից, մաշվածադիմացկուն ներբանից (տակացուից) հանովի-դնովի ներդիրներից, ԳՈՍՏ 19137-89-ով նախատեսված ճտքավոր կոշիկներին համարժեք: Քթամասը մշակված է ամբողջական առաջամասով, ճտքով և կրկնամասում՝ ամբողջական բարձրությամբ հետնամասի գոտիով: Լեզվակը ամրացված է

					առաջնամասին և ճտքերին: Բոլոր դետալները իրար միացվում են սոսնձով և կարվում են սինթեթիկ թելերով, որի կարը պետք է թույլ չտա ջրի և խոնավության ներթափանցումը ճտքավոր կոշիկի ներսամասի դետալներ: Ճտքավոր կոշիկի երեսացուն պետք է լինի խոշոր եղջրավոր անասունի բնական սև կաշվից՝ ստացված քրոմային դաբաղման եղանակով, սև գույնի, բարձր որակի, բնական մակերեսով (կաշվի մշակումը հարթ, առանց վնասվածքների), մեխանիկական վնասվածքներից դիմակայուն և մշակված անջրանցիկ (հիդրոֆոբիկ) ծածկույթով: Կաշվի անջրաթափանցելիության աստիճանը դինամիկ վիճակում պետք է ապահովի 3-5 ժամ: Կոշկերեսի քթամասի, հետնամասի և ճտքերի հաստությունը պետք է լինի 2.2-2.5մմ, լեզվակը՝ 1.3-1.5մմ, ներբանին ամրացվող հիմնական ներդիրի պադոշը 2.0-2.6մմ և հանովի ներդիրի պադոշը առնվազն 2.0-2.5մմ հաստության, քթամասն ու կրնկամասը՝ կոշտ, կրնկամասի բարձրությունը՝ համաձայն ԳՈՍՏ

					19137-89 1.3.3 կետի, շեղումները՝ համաձայն նշված ԳՈՍՏ-ի 1.3.5 կետի պահանջների: Քթամասը և կրունկամասը ներսից մշակվում է թերմոպլաստիկ նյութով, ընդ որում քթամասը 2.0-2.4մմ, իսկ կրնկամասը՝ 2.3-2.6մմ հաստությամբ (թույլատրելի է երկշերտով՝ առանց հաշվի առնելով սոսինձի հաստությունը): Մշակված նյութերը պետք է լինեն այնպիսի ամրության, որ շահագործման ողջ ընթացքում թույլ չտան կոշիկի քթամասի և կրնկամասի դեֆորմացում: Ներբանին ամրացվող հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձված, 2.0-2.6մմ հաստության բնական հումքից՝ պադոշից (խոշոր եղջրավոր անասունի վզակաշի կամ մեւքակաշի (վարտոկ, չեպրակ) ԳՈՍՏ-29227) և կոշիկի համար նախատեսված 2.0-2.4մմ հաստության ստվարաթղթից (ԳՈՍՏ-9542), որոնց միջև դրվում է, 08.-1.2սմ լայնության, 0.7-1.0մմ հաստության և կոշիկի չափսերին համապատասխան երկարության մետաղական սուպինատոր:

						Քթամասը ներսի հատվածից մշակվում է բյազ կամ գաբարդին տեսակի կտորով, կամ կաշվե ներդիրով: Կաշվե ներդիրը պետք է լինի 1.1-1.3մմ հաստությամբ բնական կաշվի հումքից (սպիլոկից)/կաշվի երկրորդական շերտով/, մուգ գույնի՝ համաձայն ԳՈՍՏ-940-Ի: Ճտքերի վերնամասը երկկողմանի մշակվում է 1.1-1.3մմ հաստության և 2.0-3.0սմ լայնության բնական կաշվից, որի միջուկը մշակվում է 5.0-7.0մմ հաստության, 60+-0.5 կգ/մ3 խտությամբ սպունգե (պենոպոլիուրետան) նյութով: Լեզվակը պետք է լինի փակ փականով 1.1-1.3մմ հաստության կաշվից կամ ընդհանուր լեզվակի կդշվից, բարձրությունը՝ ճտքի վերին եզրից ներքև 6.0սմ-ից ոչ ավել: Ճիտքը և քթամասը կարված են չորս կարով, որի ամրությունը պետք է լինի առնվազն 200Ն/սմ, իսկ կրնկամասը, ճիտքն ու հետնամասի արտաքին գոտին կարակցված են 2-4 կարով, որի ամրությունը պետք է լինի առնվազն 135 Ն/սմ՝ համաձայն ԳՈՍՏ-9290-ի: Կոշիկի ճտքերի բարձրությունը միջին չափսի համար

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО АШОТ КАРАГЕЗЯН в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2023/5 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
16					20-24սմ է, մնացած չափսերի շեղումը+-3մմ: Բարձրությունը չափվում է ճտքի ներքին մասով, կրնկամասում ներբանի և ճտքի միացման եզրից մինչև ճտքի վերին եզրը: Ճտքի քուղերի անցքերը մշակվում են 7-9 զույգ կոճականցքերով (կախված կոշիկի չափսերից) մետաղական՝ պատված պաշտպանիչ ներկով, ընդ որում վերևի հինգ զույգը կապահովի խոնավ և ցածր ջերմաստիճանի ժամանակ կորոզիայից: Քուղերը պետք է պատրաստված լինեն ամուր և անջրաթափանց սինթետիկ քիմիական մանրաթելից,որի որակը կապահովի կոշիկի սահուն և արագ քուղավորում, յուրաքանչյուրի վերջույթները (նականեչնիկները) թերմոմշակված՝ երկարությունը 1.2-1.6սմ: Քուղերի երկարությունը առնվազն՝ 160սմ: Ներբանն ամրանում է բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով: Ներբանի խզման բեռնվածությունը բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով ամրսցման դեպքում առնվազն 120 Ն/սմ է,կողքերից սեղմամբ ամրանոլու դեպքում առնվազն 250

					Ն՝ ԳՈՍՏ-19137-89 7-րդ աղյուսակի: Ներբանի երկայնական կտրվածքի նվազագույն հաստությունը առնվազն 4մմ է: Ներբանը գետնին պետք է հպվի հարթ, առանց ճոճվածքի, քթամասի բարձրությունը գետնից՝ ոչ ավել 2.4սմ, ներբանը՝ մաշվածադիմացկուն ռոտինից, որի ջերմա և ցրտադիմացկությունը պետք է ապահովի -40C - +60C ապահովելով շարային քայլը և կեցվածքը: Տակամասի ստորին հատվածի միջնամասում պետք է դաջված լինի կոշիկի չափսը (թվերով) և նշում մաշվածադիմացկանության վերաբերյալ: Ներբանը պետք է ապահովի չսայթակելու գործոնը և հետքերի զարդանախշերից ապահովի ինքնամաքրումը: Բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով ամրացման դեպքում կոշիկի ներբանը պետք է լինի՝ քթամասի հաստությունը՝ առնվազն 15մմ(հետքով), կրնկամասի հաստությունը՝ առնվազն 27մմ (հետքով), հետքի /նախշի/ խորությունը՝ առնվազն 4մմ, արտադրվում է միաձույլ,

						մաշվածադիմացկուն ռետինից՝ համաձայն ԳՈՍՏ -17311-ի: Հանովի-դնովի ներդիրը պատրաստված է բնական հումքից՝ լավ հարթեցված պադոշից (խոշոր եղջրավոր անասունի մեջկամասի կամ վզամասի կաշվից, ԳՈՍՏ-29277 և ԳՈՍՏ-1903), կոշիկի չափսին համապատասխան, հաստությունը՝ 2.0-2.5մմ: Ճտքավոր կոշիկի վերնամասը բարձր ճնշմամբ սոսնձման եղանակով ներբանին ամրացված լինելուց բացի, պետք է կարված լինի միջամասից (ներսից): Լեզվակի արտաքին կամ ներքին երեսին պետք է դաջված լինի արտադրող կազմակերպության անվանումը, ««Արտադրված է ՊՊԾ կարիքների համար, վաճառքն արգելվում է»» տեքստը և արտադրման տարեթիվը: Ճտքավոր կոշիկի աջ ու ձախ զույգը պետք է լինի միևնույն չափսերի, լայնության և կառուցվածքի: Շեղումները՝ ըստ ԳՈՍՏ-երում ներկայացված պայմանի: Փաթեթավորումը առնվազն հնգաշերտ ստվարաթղթե արկղերով, որի մեջ պետք է տեղավորված լինի 10 (տաս) զույգ

						ճտքավոր կոշիկ: Արկղերը պետք է լինեն տպագրված կամ պիտակավորված, որի վրա պետք է նշված լինեն տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Տպագրված լինելու դեպքում արտադրման ամսաթիվը կարող է լրացվել ձեռքով: Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված ճտքավոր կոշիկների որակը (կրման, շահագործման), ժամկետը՝ 8 (ութ) ամիս շահագործումը: Ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակները մատակարարը պարտավոր է անհատույց կարգով տասնչորս օրացուցային օրվա ընթացքում փոխարինել նորով: Փոխարինման ժամկետը սկսվում է պատվիրատուի կողմից գրավոր տեղեկություն ուղարկելու օրվանից: Մատակարարը պարտավոր է շարքից դուրս եկած ճտքավոր կոշիկների և փոխարինման նպատակով համապատասխան նոր խմբաքանակի մատակարարումը

					նշված զորամաս իրականացնել իր ուժերով և միջոցներով, կազմելով համատեղ արձանագրություն փոխարինված խմբաքանակի վերաբերյալ: Ծանոթություն. 1. Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը ներկայացնի. 1.1 երեք օրինակ նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար: 2. Պատվիրատուի պահանջով չափսերը կարող են փոփոխվել՝ ԳՈՍՏ-19137-89 1.2.3 ԿԵՏԻ համաձայն; 3. Ճտքավոր կոշիկների չափսերը պետք է համապատասխանեն ԳՈՍՏ 19137-89-ի, իսկ տեսքը և կոշիկի կաղապարը ու դրա լայնությունը ԳՈՍՏ 3927-88-ի պահանջներին: 4. Մատակարարվող ապրանքատեսականին պետք է լինի նոր և չօգտագործված 5. Մատակարարվող ապրանքատեսականու չափսերը նախապես պետք է համաձայնացնել պատվիրատու հետ: